№ 41 ԹԻՖԼԻՍ ՇԱԲԱԹ ՆՈՅԵՄԲԵՐ 4 — 1895 — ԹԻՖԼԻՍ ՇԱԲԱԹ ՆՈՅԵՄԲԵՐ 4 № 41

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ՇԱՒԻՂ

«ՇԱՒԻՂԸ» ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ 50 ՀԱՄԱՐ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

«ՇԱՒԻՂԻ» տարեկան գինը 10 ղրան, կէս տարեանը 6 ղրան։ Առանձին համարները 5 շահի։

Արտասահման տարեկան 8 ֆր. կամ 3 բուբլի կէս տարեանը 5 ֆր. կամ 2 բուբլի։

Արտասահմանից փոխի համար պիտի դիմել հետևեալ հասցէով։ Черезъ Баку въ Энзели Россійской ИМПЕРАТОРСКОЙ Миссіи въ Тегеранѣ пер. Бекъ-Назарову.

«ՇԱՒԻՂԻ» խմբագրութիւնը բաց է 10-ից մինչև 2 ժամը. բացի կիրակի և տօն օրերից։

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով՝ իւրաքանչիւր բառին մի անգամուայ համար 1 շահի։ Արտասահմանի յայտարարութիւնները բառին 1 կոպէկ։

Նամակների, նաև Պարսկաստանի բաժանորդագրութեան հասցէ. Rédaction «CHAVIGH» Téhéran. (Perse)

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱՑՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ 1896 ԹՒԻ

Գ. ՏԱՐԻ „ՇԱՒԻՂ“ Գ. ՏԱՐԻ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ

Կը հրատարակվի Թէհրանում նոյն ուղղութեամբ և նոյն ծրագրով։ «Շաւիղի» բաժանորդագինն է Պարսկաստանի համար մէկ թուման. կէս տարեանը վեց ղրան։ Արտասահմանի համար 3 լուբլի կամ 8 ֆրանկ. կէս տարեանը 2 բուբլի կամ 5 ֆրանկ։

Ռուսաստանից դրամական ծրարները պիտի ուղարկուեն անպատճառ հետևեալ հասցէով։ Черезъ Баку въ Энзели Россійской ИМПЕРАТОРСКОЙ Миссіи въ Тегеранѣ, пер. А. Бекъ-Назарову. Խնդրվում է ուշք դարձնել ճիշտ այս հասցէով և առանց մի բառ մոռանալու ուղարկել դրամները, այլապէս չեն ընդունվիլ։ Եւրոպայից ուղարկել պէտք է փոխանակագրով կամ թղթադրամով. Հասցէն Եւրոպայի համար Téhéran, Redaction «CHAVIGH». այդ հասցէին պիտի լինի նաև Ռուսաստանից խմբագրութեան ուղղուած թղթակցութիւնները։

Սպառիկ բաժանորդագրութիւն ոչ մի դէպքում չէ ընդունվում։

Պարսկաստանի համար հասցէն Redaction «CHAVIGH», Téhéran.

Խմբագրութիւնը ունի գործակալներ հետևեալ տեղերում։

Կովկասում.—Թիֆլիս՝ «Մուրճի» խմբագրութեան մէջ պ. Ց. Յակովբեան. պ. Խ. Արզումանեան։ Բաթում.—պ. պ. Գ. Գրիգորեան, Ստեփան Քէօսէեան։ Բագու—Տպարան «Արօր». Որդիք Բ. Արզումանեանք։ Բալախանի.—պ. Բալասի Ա. Դաբրիէլեան։ Կարս.—պ. Արէլ Ապրեսեան։ Ղուշի.—պ. Թոմաս Մհերեան։ Ախալքալաք.—պ. Ջաւադ Ց. Գրիգորեան։ Օդեսսա.—պ. Որդիք Բ. Արզումանեանք։ Եւրոպա. Ռուսչուք.—պ. Փ. Հազլեան։ Պարսկաստանում.—Սալմաստ՝ պ. Ց. Ապրեսեան (Եղբայրք Ս. Արզումանեանք) Արդաբիլ՝ պ. Յակովբ Էլչիբէկեան։ Նոր-Ջուղայ՝ պ. Յովսէփ Բարսեղեան։ Բուշիր՝ Կ. Զէյթունեան։ Ռաշտ և Էնզէլի՝ պ. Ալէքսան Յովսէփեան։ Մարաղա՝ պ. Մելքոն Խալափեանց. Դավրէժ՝ Ընթերցասիրաց Գրադ. ընկ. խանութ

Գործակալ չեղած քաղաքներից բաժանորդագին կարելի է ուղարկել պարսկական նամակագրոշմներով։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ինչու է լռել.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հայաստանցի օրիորդի խօսածը. Հայկական հարցի մասին. Նամակներ խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլի տեսութիւն.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—Յայտարարութիւններ։

ԻՆՉՈՒ Է ԼՌԵԼ...

Ո՞վ մնաց որ լուռ կենար այն սոսկալի աղէտների, այն կոտորածների, ջնջումների առաջ, որոնք ամէն օր կատարվում են Հայաստանի քաղաքներում։ Խօնում է օտարը՝ հետաքրքրվում է և իր ձեռքից եկածը չէ զլանում բաշխելու։ Ամենահեռաւոր մարդը, ամբողջ Եւրոպան իր մամուլի գրեթէ մի քառորդը Հայկական աղէտներով է լցնում. բողոքում է, կոչեր է անում, ոգևորվում է, բարկանում և ջանքեր արձակում դէպի այս կամ այն՝ իրենց շահի համար գանդաղ շարժուող դիպլոմատները, դատապարտում է այս կամ այն անտարբեր մարմինը, սոսկում է արտայայտում.... մի խօսքով յուզվում է Հայաստանում յորդող անմեղ արիւնից, ընկնող զոհերից։ Կոտորած կոտորածի ետևից սպառնում է ջնջել Հայաստանից՝ յետին հալի գոյութիւնը։ Տրապիզոնում 4 ժամուայ ընթացքում 1600 հայ են մորթում, Էրզրումում փողոցները դիակներով լցվում. Վան, Երզնկայ, Ադանա, Հալէբ հայերին ջարդում են կոտորում ինչպէս քանակութեամբ. Դիարբէքիրում 3-օր անընդհատ քիւրդերը սրամաշ են անում հայերի, թալանում նրանց տները... այս բոլորը հաղորդվում են ի լուր հանուր աշխարհի, դղրդում է Եւրոպան սոսկումից, գոռում է աշխարհը... իսկ այդ բոլորի մէջ, որպէս անզգայ մի ժայռ լուռ և անշարժ մնում է միայն հայոց կաթուղիկոսը։ Էլ ո՞ր օրուայ համար է նա որ իր ժողովրդի գոյութեան համար իսկ շարժվիլ, բողոքել չը գիտէ, որ իր շուրջը հոսող բոսորային արեան մէջ նստած, ձեռքը ծնօտին, սպասում է իր ժողովրդի գերեզմանը օրհնելու համար միայն։ Ո՞ր օրուայ համար են ուրեմն այն բոլոր սևահոգի սևագլուխները, որոնք մեր խաղաղ գոյութիւնը խաղտելուց բացի իրենց լճացած սկզբունքներով, իրենց թմրեցուցիչ խաւար բարոյականով, այժմ էլ լուռ ու անտարբեր դիտում են մեր մորթելը, մեր ոչնչանալը...

Եւ երբ մարդ յիշում է որ հայոց այժմեան կաթուղիկոսը մի ժամանակ բեմերի վրայից շարժում ու ազատութիւն էր գոչում, երբ յիշում է որ նա գեղեցիկ ֆրազներով արտասվում էր իր ժողովրդի թշուառ կեանքը և երբ այժմ տեսնում է նրան անտարբեր, լուռ, բոլորովին իր գոյութիւնը նշմարել չը տուող, նոյն իսկ որպէս պարզ հայ իր ընթացքը չը պարզող—մարդ քարանում է այդ դատապարտելի, անբացատրելի պապանձումի առաջ։ Ինչ է անում ուրեմն հայոց «խոհեմ» կաթուղիկոսը նստած իր տաք ու շքեղ վիհարանում, երբ իրենից միայն մի քանի քայլ հեռու—Հայաստանում, ճանճերի պէս կոտորում են իր ժողովրդին։

Խոհեմութիւն է քարոզում էլի, թէ համբերութիւն, աղօթում է գուցէ և կամ ապագայի համար պլաններ գծում։ Դանդաղութեան և խոհեմութեան ժամանակ է այժմ, թէ շարժելու, որպէսզի ձեռքից իզուր չանցկացնելու մոմենտ։ Միթէ մեր կրօնաւորութիւնը չէ ըմբռնում այսպիսի կեանքի և մահու վարկեանում իր վրայ եղած պարտաւորութիւնները. միթէ հայոց կաթուղիկոսը չէ ըմբռնում թէ ինչ՞ը կարող է անել իր ժողովրդի համար, թէ որքան մեծ ժամանակն է մի կողմ շպրտել ամէն ձևականութիւն և կեանքն անգամ զոհել իր ոչնչացող ժողովրդի գոյութիւնը պահպանելու համար։ Ոչնչով արդարացնել չէ կարելի նրա լռութիւնը. այժմ այլ ևս դիպլոմատիայի, խոհեմութեան, երկար խորհելու ժամանակ չէ. կրակը վառուել է, նա բորբոքվում է, լափում,..

Այժմ այլ ևս լռութիւնը մահ է, համբերութիւնը՝ գերեզման...

Վ. Գ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆՑԻ ՕՐԻՈՐԴԻ ԽՕՍԱԾԸ

Կ. Պոլսի Ս. Պատրիարքին. Սեպտ 17-ի ցոյցի օրը։

(Նէր Վեհ. Կաթուղիկոսին «Շաւիղի» խմբ. կողմից)

«Ձմեռը կը հասնի սրբազան, և Հայաստանի մէջ մեր քոյրերուն եղբայրներուն ու ամուսիններուն վիճակը որ այնչափ անտանելի է, աւելի կը դառնանայ հետզհետէ։ Ամեն օր լուրեր կը հասնին մեզի թէ առջի վիճակը ոչ միայն չէ թեթևացած, այլ այնչափ ծանրացած է, որ ձմրան հետ մէկեղ մահը պիտի իջնէ մեր սիրելի երկրին վրայ։»

«Ալ չենք դիմանար, սրբազան։ Տարի մը է որ Եւրոպան Սասունի արիւնալի ջարդէն յուզուած, մեր դատը ձեռք առաւ. ամբողջ տարի մը, որուն իւրաքանչիւր օրերը մէյմէկ տարի էին մեզի համար. անձկութեամբ սպասեցինք որ արդարութիւնը և խաղաղութիւն իջնեն վերջապէս մեր երկրին վրայ, այնքան հառաչանքներէ յետոյ՝ կարենանք վայելել ապահով ու հանգիստ կեանք մը որուն իրաւունք ունինք։ Վստահութիւն ունէինք Եւրոպայի արդարադատութեան վրայ, որ ալ այս անգամ պիտի վերջ տար մեր ցաւերուն, մեր արցունքներուն ու գիտէինք, որ ձեր հայրական հոգածութեամբը ամեն ատեն եւրոպական պետութեանց աչքին առջև կը դնէիք բոլոր այն հարստահարութիւնները ու խժդժութիւնները որոնց ենթակայ է հաւ ժողովուրդը։ Բայց ահա դեռ բան մը չեղաւ մեր յոյսերը արդարացնող, և ահաւոր ճգնաժամը կը մօտենայ։

«Սրբազան հայր, ձեզի կը դիմենք ահա, խնդրելով որ մեր յուսահատութիւնը և բողոքը ներկայացնէք եւրոպական պետութեանց։ Անոնց դիմեցէք, ըսեք որ ալ համբերելու կարողութիւններս չի մնաց, ալ դիմանալու ոյժ չունինք մեր մէջը։ Ժողովրդին քուէովը ընտրուած ենք դուք, և դացէք հոն ոյր կը կոչէ ձեզ ժողովրդի ձայնը։

«Ըսէք այդ անկարեկիր Եւրոպային որ եթէ ընդ հուպ բան մը չընէ մեզի համար, շատ չանցած ամօթէն պիտի կարմրի իմանալով որ քրիստոնեայ ժողովուրդ մը բնաջինջ եղած է»...

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

(Քաղուածներ լրագիրներից)

(Թիւրքական աղբիւրներից)

Ժամանակ է մը ի վեր «Հայկական խնդիր» անունով խնդիր մը ծագած է։ Այս մասին իրաց վիճակին չպատասխանող տեսակ տեսակ ստութիւններ կը հրատարակուին քինալից աղբիւրներէ։ Եւրոպական լրագիրներն ալ իրենց երևակայութեանը մէջ կարգ մը լուրեր ստեղծելով՝ սուտ ու սխալ հրատարակութիւններ կ՚ընեն։ Մանաւանդ այս միջոցիս հայ հասարակութեան պատկանող եւ ամենափոքր թիւ մը կազմող մէկ քանի կարճամիտներ, զորս նոյն հասարակութեան ամենամեծ մասը կ՚այպանէ, ապերախտ վարմունքի ու ընթացքի մէջ գտնուած են, ինչ որ կը լսուի թէ ժողովրդին մէջ այլ և այլ տարաձայնութեանց ծնունդ տուած է։ Զարմանքով լսուած է թէ այդ զրոյցներու մէջ անգոյ և տարօրինակ գաղափարներ ալ ծագած են, որպէս թէ Եւրոպա պաշտպանի

աչքով կը նայի մէկ քանի անձանց վերջին անգամ ունեցած ըմբոստական ընթացքին և թէ հետևաբար հայ ազգին իշխանապետութիւն կամ ինքնօրինութիւն և կամ վարչական առանձնաշնորհութիւններ պիտի տրուին»:

Այսպէս սկսելով թիւրքական գրէթէ պաշտօնական Սաբահ թերթը իր յօդուածը, քիչ հեռվում թուում է սուլթանի դիջումները այսպէս:

«Կը լսուի թէ Ն. Կ. Վեհափառութիւնը իր՝ հանրութեան գթած հայր մը ըլլալը ցոյց տալու հպատակասիրական նուիրական նպատակաւ նկատողութեան առած է հետևեալները:

Իւրաքանչիւր տեղի ու նահանգի ընդունակութեան, ժողովրդին խառնուածքին ու բնութեանը և ժամանակին ու վիճակին պահանջմանց համաձայն, ոստիկանութիւնը ու հոտիկան-զինուորութիւնը աւելցնել, ու քարեկարգել վարչական ու դատական մասը բարենորոգել և կառավարութեան նպատակին համապատասխանող բարենորոգումներն ու յառաջադիմութիւններն ընդունելի, այդ կերպիւ որ կայսր նահանգներուն ընդհանուրին համար ի գործ դրեի և Կիպրոսի խաթիթ հիմայ ունեցածին մինչև այսօր ի գործադրութեան եղող օրէնքներուն և կանոններուն շրջանակին մէջ ըլլալ և Անատոլուի ընդարձակ երկիրներու կոյս. նահանգներէն բարենորոգումները սկսին: Վերջապէս աւելցընել այն զանազան տեսակ շնորհները զորս իր բոլոր կայս. հաւատարիմ հպատակները կը վայելեն առանց բացառութեան:

«Սաբահ»

«Իքդամ» թերթը իր հոկտ. 5-ի համարում տպում է նոյն նիւթի մասին մի յօդուած, ուր յայտնելուց յետոյ որ խօսք է պտտում թէ Հայաստանի ինքնավարութիւն պիտի տրուի ևայլն, խօսում է այսպէս:

«Կրնանք բացարձակ կերպով յայտարարել թէ ճշմարիտ չէ ոչ Հայաստանի մը յօրինումը, ոչ ալ իշխանապետութեան կամ ինքնօրինութիւն մը տրուելու նման խօսքերը: Տէրութեան ուզածն է ամենքն ալ հաւասարապէս և առանց բացառութեան երջանիկ ընել, և արդէն այս բանը սկսած է գործադրուիլ Սուլթան Ամատիւլ Մէճիտի և Սուլթան Ամատիւլ Ազիզի գահակալութիւններէն սկսեալ: Տէրութեան փափաքն է ի նկատի առնելով հանդերձ բնաւորութիւններու տարբերութիւնը և բնութեան պահանջները, բոլոր Օսմանցիներուն միջև քաղաքական միութիւնը զծրացնել որով հետևաբար եթէ ընելու որոշուած բան մը կայ, այն ալ դարուս յառաջադիմութեանց համաձայն այդ օրէնքները ամբողջացնելն է»:

Այստեղ նա աւելացնում է որ կառավարութեան վափաքն է եղել միշտ երկրի տարրերը ապահովել և որ գուտ ճշմարտութիւնը ահա թէ ինչ է. «Մեր առած ստոյգ տեղեկութիւնները սա են թէ Օսմանեան կառավարութեան ընելիք տնօրինութիւնները Օսմանեան նահանգներուն մէջ քաղաքային վարչութեան, ոստիկանութեան. ժանտարմայի, դատարաններուն և վերջապէս միւս զլխաւոր ճիւղերուն կը վերաբերին որոնցմէ բոլոր օսմանեան գաւառներն ալ հաւասարապէս արդէն կ'օգտուին»

«Իքդամ»

(Ռուսական աղբիւրներից)

Կ. Պոլիս. 10 հոկտ. Թիւրքայց լրագիրներում տպված է պաշտօնական հաղորդագրութիւն, որ ասում է, թէ գոյութիւն ունեցող օրէնքների հիման վրա պետական պաշտօններ տրվում են բոլոր թիւրքահպատակներին, առանց խտրութեան ծագման: Ապա ասված է որ փոքր Ասիայի մի քանի նահանգներում ըէֆորմներ մտցնելու նպատակով, կառավարութիւնը մշակեց մի օրէնսդրութիւն, որ հաստատուած է սուլթանից:

Այժմ օրէնքի ոյժ ստացած ըէֆորմները վերաբերում էին, ի միջի այլոց՝ հետևեալ կէտերին:

1) Ընդարձակել տանուտէրների (ստարշինա) խորհրդի իրաւունքները:

2) Նշանակել դատաստանական տեսուչներ:

3) Հարկատել բանտերի վրա վերահսկողութիւն:

4) Ընդունել բոլոր թիւրքահպատակներին ժանդարմերիայի և ոստիկանութեան ծառայութեան մէջ՝ համապատասխան զանազան ազգութիւններին պատկանող բնակիչների թիւին վիլայէթներում:

5) Պատշաճաւոր թուով դաշտային պահապաններ նշանակել:

6) Ժանդարմները պէտք է ուղեկցեն քիւրդ ցեղերին, երբ նրանք իրանց ամարանոցներից անցնում են ձմեռվայ կայարանները, ընդհարումների առաջն առնելու համար:

7) Վերջնականապէս նստակեաց դարձնել թափառական քիւրդ ցեղերին:

8) Կանոնադրութիւն հրատարակել «Համիդէի» հեծելազօրքի համար, որի զինուորներին իրաւունք է տրվում համազգեցք և զէնք ունենալ միայն զօրագումարների ժամանակ:

9) Իւրաքանչիւր տարի տեսուչներ ուղարկել նահանգները՝ երկրագործութեան մէջ պնկանօնութիւնները մերկացնելու համար:

10) Հարկերը առնել համայնքների տանուտէրերի կամ այն անձանց ձեռքով, որոնց ընտրում է տեղական ազգաբնակութիւնը և

11) Արգելել ծախել հող, երկրագործական գործիքներ, գրաստ և սերմեր պետական հարկի համար և մասնաւոր անձանց:

(Ռուս. հեռագ. գործակ.)

—«Новости» ռուս թերթի Կ. Պոլսի թղթակիցը հաղորդում է որ Կ. Պոլսի հայկական ցոյցին «Հնչակեան» կոչուող ընկերութեան մասնակցութիւնը անկասկած է: Մի քանի Հնչակեաններ են ձերբակալել, ուրիշները յաջողել են խուսափել: Մէկի մօտ գտնուել է ապստամբութեան ծրագիրը: Փնտռվում է սաստիկ մի անգլիացու, որ Կ. Պոլիս է մտել ցոյցից յետոյ և որ մշտական յարաբերութեան մէջ է հայ յեղափոխականների գլխաւորների հետ:

—«Моск. Выд.» ռուս թերթը անգլիական «Times» թերթից արտատպում է այս լուրը. «Որպէս ապացոյց Կ. Պոլսում եղած գրգռուած դրութեան կարելի է մատնացոյց անել նրա վրայ, որ անգլիական դեսպան Սըր Ֆ. Կըրին ստացաւ հայկական աղբիւրից մի ազդարարութիւն, որ հաւանականաբար «երիտասարդ Թիւրքիայի» կուսակցութիւնը կը գրաւի մի հայի բրիտանական դեսպանի կեանքի վրայ փորձ անելու որպէս զի հայերի վարկը ընկնի:»

Հաղորդելով այս լուրը, ռուս «Մոսկ. Վիդոմոստի» թերթը աւելացնում է այսպիսի զգուելի խօսքեր. «ենթադրում ենք որ այս ընթացքը կապացուցանի թէ հայերը ընդունակ են ամեն տեսակ չարագործութիւններ անելու, նոյն իսկ դէպի իրենց բարեկամ թուողները»:

(Անգլիական աղբիւրներից)

«Daily Chronicle» թերթի Կ. Պոլսի թղթակիցը Հռովմից, 18 հոկտ. թուով հաղորդում է.

«Պաշտօնական շրջաններից այստեղ ես իմացայ որ անգլիական կառավարութիւնը վճռել է զօրք ավ հանել Թիւրքիայի մի ոևէ մասում, եթէ յոգուտ հայերի բաւականութիւն չը տրվի երեք պետութիւններից ներկայացրած ծրագրի համեմատ: Անգլիական կառավարութիւնը խնդրել է Իտալիային մասնակցել իրեն այն դէպքում, եթէ գործողութիւնը սկսուի և Կ. Պոլսի իտալական նոր դեսպանը որ վաղը մեկնում է Կ. Պոլիս գնալու, հրահանգ ստացաւ աշխոյժով ամրապնդելու յոգուտ հայերի խնդրուած ըէֆորմների պահանջը: Նաւատորմին հրաման է տրուած պատրաստ լինել:»

(Հայկական աղբիւրներից)

«Մշակ» լրագիրը ստանում է հոկտ. 13-ին, Էրզրումից հետևեալ հեռագիրը: Տրապիզօնի արիւնահեղութիւնից յետոյ՝ Տրապիզօնի, Կիւմիւշխանի և Բայբուրթի հովիտներում, մինչև Էրզրում, լաշերը և աջարցիները կողոպտեցին, աւերեցին և այրեցին 13 հայ գիւղեր: Սպանուածները բազմաթիւ են. Դէվէբօյնում և Բայբուրթի մօտ կողոպտուել են և սպանուել 200-ից աւելի Կ. Պոլիս գնացող և հայրենիք վերադարձող հայեր: Էրզրումը վտանգաւոր դրութեան մէջ է. բոպէ առ բոպէ կոտորած է սպասվում....»

—«Պարիզում բնակուող հայերը դիմել էին հրապարակախօս Ռոշֆորին մի սլաղերձով, խնդրելով որ Ֆրանսիան և ս չը զլանայ իր աջակցութիւնը հայոց հարցի լուծման համար: Ռոշֆոր՝ ընդունելով հայերի խնդիրքը, տպագրել է մի հրաւէր որի մէջ վառ գոյներով նկարագրելով հայերի զարհուրելի վիճակը, պախարակում է Ֆրանսիայի բռնած անարժան ընթացքը հայոց հարցի վերաբերութեամբ»:

—«Լոնդոնի ազատամիտ թերթերը դրժգոհ են Սալսբիւրիից: Շատ դժգոհ է նրանից և անգլո-հայկական կոմիտեն, որը դաւաճան է անուանում նրան: «Լորդ Սալսբիւրին ադամանդից շինած հսկայ էր երևում, բայց բանից դուրս եկաւ, որ այդ հսկան կաւէ ոտներ ունի: Նա յետ կանգնեց իր պահանջներից հայոց հարցում, և դա մի բիծ է բրիտանական անուան համար»:

«Մշակ»

—

«Revue des revues» ֆրանսական կիսամսեայ հանդէսը, որ իր սեպտ. 1 և 15 համարներով հրատարակել էր «Մի մարտիրոս ժողովուրդ» վերնագրով յօդուած և թարգմանել Մաք-Գոլլի «Հայաստանը Եւրոպայի առաջ» գիրքը, ստացել է նամակներ հայ կանանցից և հայ երիտասարդներից: Հանդէսը տպում է կտորներ այդ նամակներից իր հոկտ. 1 համարում. այդ կտորները զանգատ են յայտնում ֆրանսական թերթերից, որոնք այնքան անտարբեր են ձևանում հայկական աղէտներով. նրանք յոյս են յայտնում որ դոնէ այժմ ֆրանսական մամուլը չի լռել և ձայն կը հանի:

Rev e d.s revues-ն տպագրելուց յետոյ այդ, իր կողմից աւելացնում է հետևեալ խօսքերը:

,,Մեր երիտասարդ բարեկամ հայերը չեն խաբուած: Ամեն կողմից ցաւակցական համակրութեամբ լի նամակներ են հասնում մեզ հայերի համար: Քաղաքական մի մեծ թերթ ,,Petit Parisien'' արդէն հրատարակել է մի ճարտարախօս յօդուած, ,,La Lanterne'' թերթը իր կողմից մեզ գրում է որ սկսելու է մի պաշտօնական կռիւ մղել հայոց խնդիրը պաշտպանելու համար և մեր օրէնսգէտներից շատերը մտադիր են մէջ ընկնել առաջին առիթով և կառավարութեան հարց տալ թէ ինչ է մտադիր անել վերջ դնելու համար այն ըսկանդալներին և կոտորածներին, որոնք տեղի են ունենում հայերի երկրում: Սա դեռ սկիզբն է միայն!''....

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Թէհրան 3 նոյեմ. 95

Հայկազեան օրիորդաց դպրոցի խնամակալուհիները յայտնում են իրենց խորին շնորհակալութիւնը այն ազնիւ տիկիններին, որոնք չը զլացան օգնել իրանց նուէրներով քաղաքիս հայ աղջիկների կրթական գործին:

Խնամակալուհիք Հայկ. օր. դպրոցի

Վ. Ա. Փրէնդեան

Մ. Կ. Պողոսեանց

Մ. Ա. Յակոբեանց

Բագու. 3 հոկտ. 95

Կարդալով «Շաւիղի» № 24-ում բողոքականների քարոզիչ Կաչայ Իսայ Իբրահիմովի գրածն, իբր հերքումն իմ № 17-ում գրած նորան իմ ճերմակեղէնս գողանալուն, յուսամ չզլանաք երկտող լուսեղէք պատւական Շաւիղիդ էջերում, արդարութիւնը երևան հանելու համար: Ես ակամայ մնացել եմ զարմացած. լսել էի որ աւազակներն անամօթ են լինում, բայց չէի տեսած. այժմս տեսայ, այն էլ զարմանալի անամօթութիւն: Կաչան, ինձանից չէ ամաչում, միթէ և չէ ամաչում պ. Դաւիթ Փանիեանցից, Յովհաննէս Արասխանեանցէն, Մամիկոն Փանիեանցէն, Ներսէս Տէր-Յովհաննէսեանցէն և երկու թուրքից, որոնց անուններն չեմ իմանում. արդեօք այն կաչան չէր որ վերյիշեալ անձանց մօտ ինձանից ապտակներ էր ուտում, արդեօք պ. Ներսէս Տէր-Յովհաննէսեանցն չէր որ նրա բարձի

միջից իմ ճերմակեղէնս հանեց, արդեօք ինձանից ապտակներ ուտելուց շապիկս հաքին չէր որ գնաց սենեակումը հանեց և տուաւ։ Աւետարանական ընկերութեան ուշադրութիւնն եմ հրաւիրում տողերիս վրայ, որ երեխայոց հացը չգցեն շների առաջ. աւետարանական ընկերութեան փողերն սուրբ գործերի համար է գումարուած. հարկաւոր է աւաղակ կաշանների ձեռքից առնել՝ յանձնել արժանաւորներին կինգրեմ պ. Ներսէս Տէր-Յովհաննէսեանցը երկու տող գրէ Մաշաղիսարից լրագրի միջոցով և ճշմարիտ եղելութիւնը երևան հանէ, որ էլ կաշաներն չը կարողանան լրագրի էջէրն կեղտոտել։

Աբրահամ Սարումեանց.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Անցեալ կիւրակէ, հոկտ, 29-ին Թէհրանի Ս. Գէորգ եկեղեցում հոգեհանգիստ կատարուեց Կ. Պոլսում, Տրապիզօնում և Հայաստանի մէս քաղաքներում իրենց ազատութեան համար զոհ ընկած հայ եղբայրների համար։ Եկեղեցւոյ սեղանը պատած էր սևով։ Փոխ. Հայրը մի յուզիչ քարոզ խօսեց, իսկ երբ հոգեհանգստի արարողութիւնը տկսեց, շատերը լալիս էին և առ հասարակ բոլոր ներկայ եղողները յուզած էին՝ մանաւանդ որ նոր էր հասել Պէլարբէքիրի Յօրեայ կոտորածի լուրը։ Ներկայ էին հոգեհանգստին մեր բողոքական եղբայրներն ևս, իսկ Թէհրանցի լուսաւորչականներից շատ քիչ կային։ Բացակայ էին թէ տեղացի և թէ կովկասցի այն բոլոր հարուստ չարչիները, որոնք իրենք իրենց վաճառական են կոչում։ Բացակայ էին ազգային գործերի գլուխ անցած Ուսումն. ընկերութեան ատենապետն ու Հայկական դպրոց անունը կրող խալֆայանոցի խան տնօրէնն ու խալֆան. բացակայ էին ազգային փողով բժիշկ դարձած «գիտնականներն» ու իրենք իրենց համար «իշխան» տիտղոսը դալբնող պօլսեցի հոոոսները... Մի խօսքով բացակայ էր այն դասը, որ Թէհրանի մէջ կազմում է որպէս ազայ՝ան դաս. եկեղեցի էին եկել զգացումով երիտասարդներն ու անկեղծութեամբ՝ զոհւած եղբայրների համար մտածող՝ հայերը։ Թող ամաչեն այն բոլոր հայ խաները, բէժիշկներն ու «իշխանները», որոնք իրենց այս ընթացքով մի անգամ ևս ապացուցեցին որ սնոտի մեծախօսներ են և ուրիշ ոչինչ...

—

Երէկ ուրբաթ, ամսիս 3-ի երեկոյեան, տեղիս բողոքականների ժողովանում տեղի ունեցաւ մի երեկոյթ, որ գրական բնաւորութիւն էր կրում։ Երեկոյթում պ. Յ. Միրզայեանը պարսերէն լեզուով կարդաց իր ճանապարհորդութեան մասին Թէհրանից մինչև Բաղդատ։ Պիտի նկատել որ, մեր սպասածին հակառակ, նկարագրութիւնը շատ չոր էր և զուտ տոպոգրաֆիական։ Չը նայելով որ պարոնը կանգ էր առել Բիսիւթիւնի լեռան մօտ և գնել նրա արձանագրութիւնները, չը նայելով որ նա յիշեց՝ որ եղել էր Նիմրուդի պալատի աւերակներում, նա այնպէս վարուեց այդ երկու նշանաւոր և Ասսիրիական ու հայկական պատմութեան վրայ մեծ լոյս սփռող հնութիւնների հետ, որ կարծես երբէք ծանօթ չէր արևելեան հին ազգերի պատմութեան հետ։ Որովհետև Բիսիւթիւնի արձանագրութիւնն էր որի շնորհիւ ոկսեցին կարդացւել բևեռագիր արձանագրութիւնները, ուր կարդացւեցին Դարեհի՝ Հայաստանում արած արշաւանքները և այլն և այլն և Նիմրուդի պալատումն էր, ուր Լայարդը պեղեց հանեց այժմ Բրիտանական մուզէի մի քանի սրահները լցնող և Ասսիրիական քաղաքակրթութիւնը լուսաբանող, բազմաթիւ կիսաքանդակներն ու արձանագրութիւնները։ Դասախօսը ամէն մի պատմութիւն կամ հնախօսութիւն եթէ թերթէր, անշուշտ տեղեկութիւն կը գտնէր այդ երկու նշանաւոր հնութիւնների և նրանց պատմութեան տուած լոյսի մասին։ Չը նայելով դրան, երեկոյթ կազմելու միտքը քաջալերութեան արժանի է. ամօթ լուսաւորչական հայ երիտասարդներին, որոնք չեն կարողանում մի այդպիսի ձեռնարկութիւն իսկ անել։ Ի դէպ է այստեղ ասել, որ բողոքական հայերը մի ամսից յետոյ կ'ունենան մի աւելի մեծ նւագա-գրական երեկոյթ ևս։

—

Մեզ հաղորդում են մի ծիծաղելի լուր, որի ճշտութիւնը չենք երաշխաւորում։ Իբր թէ քաղաքիս փոխ. հայրը հայ երիտասարդներին արգիլել է ժողովներ գումարել, հաւաքել, գրականական երեկոյթներ, ներկայացումներ կազմելու համար։ Ի՞նչ է նշանակում այդ երեխայական հրամանը, որ իբր թէ ծնում է մի անհիմն և ծիծաղելի վախկոտութիւնից։ Բայց մենք չենք կարող հաւատալ որ այդ լուրը ճիշտ լինի. անշուշտ հայր ողորմն էլ կը շտապի հաստատել որ սուտ է մեզ հաղորդածը, աչքի առաջ ունենալով նաև որ մենք Թիւրքիա չէ որ ապրում ենք այլ Պարսկաստանում և այն էլ Թէհրան, ուր ամէն մարդ ազատ է ժողովներ կազմել՝ երեկոյթներ տալ, ընկերութիւններ հիմնել և այլն և այլն։ Մենք չենք կարծում իսկ որ հայը սուրբը կամենայ ոտնաձգութիւններ անել այդ բոլորը իր իշխանութեան տակ առնելու համար կամ իր իրաւասութեանը ենթարկելու. բայց կրկնում ենք, սիրում ենք հաւատալ որ մեզ հաղորդած լուրը հիմնովին սուտ է։

—

Դավրէժից մեզ գանդատ են յայտնում որ թերթերը անկանոն են ստացվում և որ վերջերս մինչև իսկ երկու համար միասին են ստացւել։ Յայտարարում ենք որ մեր կողմից երբէք անկանոնութիւն չէ եղել, բացի անցեալ 39 և 40 համարները միասին ուղարկելուց։ Պարսկական փոստը այլ և եւ էլ որի ուրիշ հանգամանքներն են այդպիսի զարտուղութիւնների պատճառը. ամէն մի պարսկահայը կարող է ըմբռնել այդ։ Բայց մենք կ'աշխատենք որ այդ վերջինը լինի, ի հարկէ որքան հնարաւոր է։

—

Անցեալ համարով, Ռուսաց գործակալութեան հեռագրի հիման վրայ հաղորդել էինք մենք էլ, որ Բաթումում մի հայ երիտասարդ թրքական մզկիթն է մտել և այլն։ Այժմ «Մշակի» մի թղթակից Բաթումից գրում է որ այդ հեռագրալուրը ճիշտ չէ և որ այդ հայ երիտասարդը հարբած ժամանակը հայհոյում է թիւրքերի, որ նրանք կատաղաբար հայի վրայ են յարձակվում և կտոր կտոր կանէին, եթէ տեղացի մի վաճառական ներս չէ քաշէր նրան իր խանութը և յետոյ, ապահովացնելու համար՝ չը յանձնէր ոստիկանութեան։

—

Եւրոպական շատ թերթեր ծաղրանկարներ են տալել հայոց գործերի մասին և ի հարկէ միշտ յ՝օգուտ հայկական հարցի և ծաղրելով Եւրոպայի անտարբերութիւնը։ Դրանցից Աւստրիական «Floth» և «Figaro», Պրագայի լեհական «Humoristicke Listy» Լոնդոնի «Moonshine» և իտալական «Fichietto» թերթերի 6 ծաղրանկարները կարելի է տեսնել մեր խմբագրութեան մէջ։ Ծաղրանկարները շատ սուր են, մանաւանդ «Floth»ինը և «Fichietto»ինը։

—

Ստացանք Ջոն Լեբբոկի «Հարիւր ամենալաւ գրքեր» բրոշիւրը, թարգմ, Ա. Եդիգարեանի։ Ինքնակրթութեան համար ընթերցանելի գրքերի մի ցուցակ է դա, որ պարունակում է պատմութեան, կլասիկ գեղարուեստական գրուածքների, փիլիսոփայութեան և այլն համար մի ցանկ։ Այս գիրքը իբր ղեկավար չէ կարող լինել. նա աւելի մասնագէտների կարող է ծառայել՝ որովհետև օրինակ, պատմութեան համար մի ինքնակրթուող պէտք չունի Թուկիդիդէս կամ Տիտ-Լիվոս կարդալ, երբ Մոմզէնի Հռովմ. պատմութիւնը կայ կամ փիլիսոփայութեան համար աւելորդ է Պլատոնի գործերի կամ Արիստոտելի բազմաթիւ գրուածքների մէջ մտնել՝ քանի որ Լիւիսի «պատմութիւն փիլիսոփայութեանը» կայ և այլն։ Ցամենայն դէպս իբր ցուցմունք ամենալաւ գրքերի, Ջոն Լեբբոկի բրոշիւրը լարմար է ի բաց առեալ, կրօնի և «բարոյագիտութիւն» կոչւող մասի ցոյց տուած գրքերից շատերը։ Բրոշիւրի գինը 8 կ. է։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՆ

—

«Դաւառներին հասած հեռագիրները կը ծանուցանեն, որ շնորհիւ վ. սուլթանի.... և այլն և այլն. խաղաղութիւնն ու անդորրութիւնը կատարեալ է»։ Ամեն և ընդ հոգոյդ քում..., Բանը այն է, որ ամեն օր, ամեն համարով, նոյն նէյնիմն է երգվում նոյն երեսի վրայ, նոյն ձևով և նոյն մտքով։ Մարդ ակամայ յիշում է ազգային առածը թէ՝ «եթէ սոխ չես կերել, ինչու է բերանդ այրվում...»

Չը նայելով դրան, «Հայրենիքը» սիրտ ունի դեռ «երկան թաթիկներ» վերնագիրներով առաջնորդողներ գրելու, որոնք, ասենք, ուշադրութեան իրաւունք ունին։ Մի շարք յօդուածներ են որոնք դպրոցական գործերով են զբաղվում. երևան են հանում աշակերտներին ծեծող, դէպի նրանց գազանային վարմունք ունեցող ուսուցիչների գործերը։

Օրինակ։ Թոքաթի մէջ դպրոցը փակւել է մի գազան դասատուի շնորհիւ և «Հայրենիքը» հարցնում է

1) Ի՞նչ պատիժ տրւեցաւ ուսուցչին.

2) Ինչու մէկ զաղրալի անձի պատճառով քաղաքին բոլոր մանկտին մնայ առանց դրպրոցի.

3) Զաւկի տէր հայ ընտանիքները պիտի ուզեն այդպէս անտարբեր մնալ։

«Հայրենիքին» կարող եմ իմ կողմից պատասխանել և հաւատի եմ որ ասածներս կը կատարւեն։

Ուսուցիչը մի քանի օր տնից տուն կը վազի, մի քանի աղաների մօտ կը քծնի, հայհոյանք կը ստանայ և «մեղայ» կը կոչի. մի քանի ուռածափորների «հովանու» տակ կը մտնի և ահա մի դեղեցիկ օր՝ նորից մուտք կը գործի դպրոց.,.

Օրինակը տես Մարաղայի Ցոնան վարժապետի պատժիլը և աղաների շնորհիւ նորից դպրոց մտնելը։ Եթէ Թոքաթում կայ Սալմաստի Ըսէն Վեհունու-փայտունու պէս էլ մէկ վարդապետ, ուրեմն ամենայն ինչ կատարեալ է։

Դրանից յետոյ «Հայրենիքը» հարցնում է թէ ինչու մի անձի պատճառով քաղաքի բոլոր մանկտին մնաց առանց դպրոցի։ Անշուշտ մանկտին առանց դպրոցի չի մնալ, բայց դպրոցը զուրկ կը լինի «գազան ուսուցչի» բացակայութիւնից։

Իսկ որ զաւակի տէր ծնողներ պիտի ուզեն այդպէս անտարբեր մնալ—դա փաստ է։ Ո՞վ է գլուխ ցաւեցնելու. մի գազանութիւն է արել—ոչինչ, վաղը կը մոռացվի. մէկ էլ որ այդ վարժապետը գուցէ «մեղմաբարոյ» է, «խոնարհ» է և «վարւեցող»... Օրինակը տես Թէհրանի Դասպարեանը։ Ամեն Թէհրանցի ձեզ կը պատմի զզւանօք նրա գործերի մասին. ամենքը գիտեն որ նա ուսուցիչ չէ և ոչ էլ մարդ կոչւելու արժանի... Բայց «անտարբեր» են։ Խնամական կապեր... Դասպարեանի մօտ ունեցած գաղտնիքներ, մի քիչ էլ որ այդ մարդը քծնելու մէջ խիստ վարպետ է, մեղմ է և խիստ խոնարհ, հնազանդ. մանաւանդ որ ամբողջ օրը ծնողներին ազատ է պահում իրանց չար զտւակներից. առաւօտեան 8-ից մինչև երեկոյեան 5-ը պահում է նրանց. եթէ ոչինչ չէ սովորեցնում, խօ սովորեցնում է ստրկական խոնարհութիւն, ճահճային ու ճանճային բարոյականութիւն, բթամտութիւն և զզւելի շողոքորթութիւն... այդ էլ մեծ բան է. եթէ Թէհրացուն հարցնես՝ կասէ «ապրելու համար այդպէս էլ հարկաւոր է». անցեալ տարի չէ՞ր որ մի «խան մարդ» պնդում էր հրապարակօրէն, որ խաղաղութիւն պահպանելու, վարւելու միակ միջոցնէ գլուխը բանալ, ծռիլ և ասել քեզ զարնողին ու քեզ հայհոյողին «ձեր խոնարհն եմ, ձեր ծառան. իրաւունքը քոնն է, արա ինչ կուզես»։ Բանը այն է որ այդ «հասկացող» մարդի պէս են մտածում գրէթէ ամբողջ Թէհրանցիք. բացառութիւնները չեմ մոռանում. բայց և ցոյց տալ չեմ կարող. թող Թւեն ինձ և ուրախ կը լինեմ։

Բացի այդ տեսակ յօդուածներից, «Հայրենիքը» երբեմն էլ խօսում է Կովկասի հայկական գործերի մասին, Էջմիածնի քաջութիւնների,

Վեհափառի «անորոշ» գործունէութեան, «խիստ հաստատուն» որոշումների և Սուլթանների ու Ներսէսների սրանչելիքների մասին:

«Հայրենիքը» մի թարմութիւն է տուել Կ. Պոլսի մէջ. մի թարմ հոսանք, թէև շատ մեղմ, շատ զգուշաւոր և շատ չափաւոր. նրա շնորհիւ քիչ կեանք է մտնում Կ. Պոլսի հայերի լճացած շրջանում:

Տասը տարուց ի վեր, երևում է որ Կ. Պոլսի հայ լրագրութիւնը առաջադիմել է. 10 տարի առաջ «խմբել» գաւառացու մասին զրելը անմտութիւն էր, նրա երկրներից թղթակցութիւնները տալ՝ աւելորդ. իսկ այժմ ոչ միայն տեղեկութիւններ, թղթակցութիւններ, այլ և առաջնորդողներ և յատուկ դիւրադրութիւն են նկատվում: Դա մի մեծ քայլ է:

Մի բան միայն դեռ չէ փոխուել. այն է, Կ. Պոլսի հայերի ֆրանսական ոգրագործական կամ խոհանոցական անմեղ, տասը հատ 1 կոպեկանոց, օրը 10 հատ հրատարակուող միօրինակ զրգռիչ և ոչ մի գրական արժէք չունեցող վէպերի ընթերցման պտորվակը: Այդ է պատճառը՝ հէնց, որ Հայրենիքը չէ թողնում այդպիսի վէպերի տալը: Բայց լաւ կը լինէր եթէ սկսէր ուղղել վէպերի ընթերցանութեան ճաշակը և տար զոնէ Դոդէի, Զոլայի, Կոպէի, Բուրժէի, Իբսենի և այլն ֆրանսական. Թիեօրնսոնի, Օլա Հանսէն, Ինսաս Լի և այլն Սկանդինաւեան, Դոստաեվսկի, Տալստոյի, Տուրգենեվ և այլ ռուսական վիպասաններից նախ թեթև և ապա լուրջ հոգեբանական, պնդաբեռատական վէպեր... բաւական է կերակրել ժողովրդին ազնասանուններին համար թխած չոչիկ վէպերով:

Դը Բուակոպէի, Դը Մոնթէպլէնի, Դաբօրիօի, Զաքոնի և այլն հեղինակների այդ տեսակ վէպերը նոքին ոչ միայն նշանակում է լրել ընթերցողի անգին ժամանակը, այլև փչացնել գեղարուեստական զգայնութեանը ունեցած նրա ճաշակը, բորբոքել նրա տրնակայութիւնը անմիտ բանիերով, թիւրուորոմներով, առեղծուածական սպանումներով և մանաւանդ, պատկառանք ազդել դէպի ոստիկանութիւնը...!

Ես յիշում եմ դեռ երբ այդ վէպերը կարդում էի և փողոց ելնում, իւրաքանչիւր մութ անկիւն, իւրաքանչիւր դէմք հետախուզում էի, ամենի վրայ կասկածում էի, ամեն նախադասութեան մէջ դեռ մտքի էի փնտռում և որը գլխանոցն է, ինձ Լրջիք կամ այլ գաղտնի հետախուզող ոստիկան համարելով՝ ծիծաղելի կերպով մանրամասն ինքնաքննութիւն էի ենթարկում մէկին, եթէ նիսալէր հոգ որ և է դիպք պատահէր: Դեկ այժմ երբ մտաւորական այժիքը չկարդող այդպիսի վէպեր եմ տեսնում որ կարդում են, քիչ է մնում ոստիկան կանչեմ և զոռամ ձգող կայ. մտքեր է հարստահարվում»...

Դուրս պիտի հետել մեր լրագրութիւնից, գրականութիւնից, ընթերցարաններից և զրաղարաններից այդ քոլոր Մոնթէ-Քրիստո կոմսները, Ծերունի Լրջիքներն ու Սիմոնէ-Մարիները. այդ «Դազաղին մէջեղն» ու «Թիապարտին աղջիկները»: Ժամանակ է հայ ընթերցողին տալ Դոդէի, Զոլայի, Բուրժէի, Կոպէի, Բիօրնսոնի, Իբսէնի, Դոստաեվսկու, Տալստոյի, Կարօլէնկոի, Սուդերմանի և այլ այդպիսի ընտիր գրողների գեղարուեստական արտադրութիւններից, որոնք զարգացնում են ճաշակն ու միտքը, լացում են մեզ հետ, սրտի լարերը թրթռեցնում՝ հոգու խորքերը պրպտում, մարդկային ճանաչողութեանը օգնում և նրա զարգացմանը նպաստում....

*** Աֆերիստ «Ցարագը» մի յօդուած է տպել «Ռաշտի ներկայ վիճակը» վերնագրով: Դա մի յօդուած է, որը անշուշտ գրել է Ռաշտի յայտնի խարանուած Բ. Սողոմոնեան ուսուցիչը, գովելով Սատուր և Աղաւէլ փաշա աղաներին, գովելով իրեն ու իր դերասանուհի-վարժուհի քրոջ և զղեալի փողոցային խօսքեր ուղղելով այս ու այն անձնաւորութեան, որոնք իր՝ ուսուցչի շառլատանութիւնն են երևան հանել և նրան ու իր քրոջը խարանել — թողել: Այդ յօդուածում մի քանի կեղտոտ բաներ են պատմվում տեղական քահանայի մասին. թէ որքան ճիշտ են—այդ երբէք երաշխաւորել չէ կարելի, քանի որ դա դուրս է եկել Բ. Սողոմոնեանի գրչի տակից. մի գրիչ որ միմիայն Սատուրի պէս աւաղակների և Աղաւէլի պէս ողորմելի արարածների գծնել ու շողոքորթել գիտէ...

Եւ «Ցարագը», Կովկասի լրագրութեան այդ խրդուիլակը՝ քը կոկոզավիզ քարոզում է աղաների քրիստոնութեան, նրանց ոտերի տակ գծնողներին դէմ՝ տեղ է տալիս Սատուր և իր տեսակ աղաներին գրվող թղթակցութիւններին:

«Ցարագը» Կովկասի «Արմենիան» է դարձել. նրան էլ ժամանակն է ասել

«Գնա քիտակ
Երկրի յատակ
Ընդպատակ
Դու հացկատակ»...

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՐԷՅՏԵՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Կ. Պոլիս. Նոյ. 7. Ներքին գործոց նախարար Ռիֆաթ փաշան նշանակուեց մեծ վէզիր՝ Քեամիլ փաշայի փոխարէն: Նոր մինիստրութիւն կազմուեց. Բերլինի թիւրքական դեսպան Ահմէդ-Թէֆիկ բէյը՝ ֆինանսների և Ռիզա փաշան պատերազմական նախարարներ:—Լուրեր են հասնում Ասիական թիւրքիայից, որ քիւրդերը թափուել են Դիարբէքիրի (Տիգրանակերտի) վրայ և 3 օր կոտորել են քրիստոնեաների և թալանել նրանց տները: Կարգը վերահաստատուեց այն ժամանակ միայն երբ ֆրանսական կառավարութեան կողմից ճնշում գործ դրուեց տեղական իշխանութեան վրայ, որովհետև ֆրանսական կոնսուլի կեանքը վտանգի մէջ էր:

Լոնդոն. 8 նոյ. Դէվոնշիրի դուքսը, որ խորհրդարանի նախագահն է, խօսելով մի հանդէսի մէջ ասաց, որ ամէն մարդ պէտք է նկատի դր մենք շատ շատ հեռու չենք արևելեան հարցի վերաբացումից, եթէ նա արդէն բացուած չէ: Անցեալ պատմութիւնը ցոյց է տալիս—ասաց նա—թէ որքան դժուար է ամենից խաղաղասէր թագաւորի և ամենից խելօք պետական մարդու համար անգամ՝ մի որոշ ու հաստատ լուծում տալ այն դժուարութիւններին, որոնք ծագում են արևելեան հարցից:—Քաղաքական անհանգստութեան պատճառով, որ դեռ շարունակվում է, ներքին և արտաքին արժէքդրների առևտուրը այսօր շատ դանդաղ է:

Լոնդոն. 10 նոյեմ. Լորդ Սոլսբիւրիի ճառերից մէկը էականապէս խաղաղասիրական էր. նա խօսելով ռուսների Պորտ-Արտիւրի վերաբերութեամբ ունեցած ձգտումների մասին պատուղ լուրերի վերաբերութեամբ, ասաց որ Անգլեան պատրաստ էր որ և իցէ մի նոր ձեռնարկութեան՝ պատերազմի կամ վաճառականութեան մէջ այդ կողմերում. կարող էր անխռով կերպով նայել այն անձի վրայ, որը կը կարծէր թէ կարող է անզգեցացոց դուրս քշել այդ բարբարոս երկրից: Նա կրկնեց լորդ Բիքոնսֆիլդի խօսքերը, որ «Ասիայում բաւական տեղ կայ բոլորի համար էլ»:

Արժէթղթերի գինը շարունակվում է իջնել և այսօր նորից մի քայլ առաջ անկում է ունեցել:

«Times» թերթը Հռոմից հեռագիր է ստացել, որ իտալական նաւատորմիղ հրամայուած է պատրաստ դտնուել հետեւելու անգլիական նաւերին, որ որ Եւրոպայի խաղաղութեան ջահերը պէտք ունենան:—Լորդ Սոլսբիւրին հակառակեց որ թիւրքը պաշտօնաներին փոխարէն հայեր նշանակուեն Հայաստանում. նա խոյս է ուզում տալ զանազանութիւն դնելուց, որպէսզի ցոյց տայ Անգլիայի հպատակ Հնդկաստանի մահմեդականներին, թէ նրանք կարող են հաստատ համոզուած լինել որ ոչ մի զանազանութիւն չէ դրվում իրենց մէջ, ինչպէս և նկատել են նրանք մի տարուց ի վեր: Այս վերջին խօսքերի համար, երէկ, թիւրքաց էնջումանը—խալամի միտինգի մէջ որոշեց շնորհակալութիւն յայտնել լորդ Սոլսբիւրիին և լոյս յայտնել որ թիւրքիայի ամբողջութիւնը կը պահպանուի:

Գահիրէ. 11 նոյեմ. Նուբար-փաշան, որ խորհրդի նախագահն էր և ներքին գործոց նախարարը, գործից քաշուել է՝ ծերութեան պատճառով: Մուստաֆա-Ֆէհմի փաշան բռնելու է նրա տեղը: Սբանի փաշան նշանակուել է պատերազմական նախարար:

Լոնդոն. 12 նոյեմ. Հրաման է ստացուել Վուլվիչում, որ պատերազմական մթերք ուղարկեն Ակրա, այնտեղ պատրաստուած արշաւանքի համար Կումմասսիայի ընդդէմ (Աշանտի թագաւորութիւն, Աֆրիկէ):

Փարիզ, 12 նոյեմ. Ֆրանսական յատուկ մի նաւատորմ գնաց արևելքի ջրերը:

Լոնդոն. 12 նոյեմ. Իտալական նաւատորմին հրամայուած է գնալ Լէվանդ:

Լոնդոն. 13 նոյեմ. Կոլոնէլ Սկոթը նշանակուել է հրամանատար Աշանտի գնացող արշաւանքին որ պիտի բաղկանայ 1400 անձերից և որ պիտի պարունակէ 300 ընտիր զօրքեր:

Հռոմ, 13 նոյեմ. Հաւանակօրէն իտալական նաւատորմը կը միանայ անգլեականին՝ Սալոնիկի մօտ:

Կ. Պոլիս. 12 նոյեմ. Նաբլիսում (Երուսաղեմի մօտ) ամբոխը յարձակուեց անգլեացի միսիոնարների բնակարանների վրայ, սպանեց ծառաներից մի քանիսը. բայց միսիոնարները մի կերպով պրծան:

ՎԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԸՐԺԷՔ ԳԼԽԱՒՈՐ ԲԵՐՔԵՐԻ
(30 հոկտեմբեր 95)

—

Նուշի միջուկ լիդրը (14 և կէս ֆունտ) արժէ . . .	12,55	— դրան
Փիստա (պիստակ) . . .	11 — —	»
Սարդա, խալվարը (18 փութ)	110 — 120	»
Ոսկարի չամիչ, խալվարը .	45 — —	»
Ցորեն, խալվարը » . . .	— — —	»
Գարի »	— — —	»
Ճաքար լիդրը	8,50— 9,20	»
Ճահանի չամիչ	130— —	»
Ընկոյզ.	100—105	»

Սև փողին թումանին 1 դրան, 20 կ. սարֆ ունի. իսկ նոր դրանը հնի հետ փոխելու սարֆը թումանին 4—6 կ.:

Ուտելեաց վերաբերեալ բաները շատ թանգ են: Սպիտակ դրամը սակաւ է, առևտուրի մեծ մասը սև փողով է կատարվում:

Արտօնատէր հրատարակիչ՝
ԸՆԴՐԻՍՈ ԲԷԿՆԱԶԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

30 տարեկան մի տղամարդ թէհրանում, քրիստոնեայ, լաւ գիրք ունեցող (տարեկան 3000 թուման ռոճիկ ունի) փնտռում է հետը պսակուելու համար, մի քրիստոնեայ աղջիկ որ լինի 15 տարեկանից ոչ աւելի. լինի բոլորովին ջրքաւոր բայց լաւ ընտանիքից և որ ունենայ հետևեալ յատկութիւնները:

Իմանայ լաւ տանտիկնութիւն,
Լինի գեղեցիկ և համեստ,
Երկար մազերով, սիրուն փոքրիկ ատամներով և սալակ վերքից չունենայ երեսի վրայ:

Եթէ կարող է թող լուսանկարը նուղարկի, ապահով լինելով որ գաղտնի կը պահուի:

Դիմել փակ նամակով հետևեալ հասցէով Lit. H. 1895
„Շաւիղի" խմբագրութեան
1—1

ՋՕՆ ԼԵՔԲՈԿԻ

Հալիւբ ամենալաւ գրքեր, հին և նոր ժամանակի:
Թարգմ. Արշակ Եդիգարեան
Գինն է 8 կոպէկ
Դիմել Թիֆլիզ. կեդրոնական գրավաճառանոց:
1—2

GRAND HOTEL

ԳՐԱՆԴ ՕՏԷԼ
Հիւրանոց
ԱԼԱ-ԷԴ-ԴՕՎԼԷՅԻ ՓՈՂՈՑՈՒՄ
ԹԷՀՐԱՆ
8—50